Հաստատված է
ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ գիտական խորհրդի
«02» 10 2015 թ. թիվ 84 նիստում
ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ տնօրեն
Ա. Սարգսյան

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԳԱԱ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻՆ ԿԻՑ ,, ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԴԻՏԱՐԱՆԻ,,

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի հոգեբանության ամբիոնին կից «Հոգեբանական դիտարանը» (այսուհետև՝ Դիտարան) ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի (այսուհետև՝ ԳԿՄԿ) կառուցվածքային ստորաբաժանում է, որը գործում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ԳԿՄԿ-ի և սույն կանոնադրությանը համապատասխան:

1.2. Դիտարանը կարող է վերակազմակերպվել կամ լուծարվել ԳԿՄԿ տնօրենի ներկայացմամբ՝ ԳԿՄԿ գիտական խորհրդի որոշմամբ:

1.3. Սույն կանոնադրությունը կարող է լրացվել կամ փոփոխվել ԳԿՄԿ տնօրենի ներկայացմամբ՝ ԳԿՄԿ գիտական խորհրդի որոշմամբ:

2. ԿԵՆՏՐՈՆԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

2.1. Դիտարանի նպատակներն են.

ա) աջակցել Հայաստանի Հանրապետությունում կիրառական հոգեբանության զարգացմանն ու որակի բարձրացմանը,

բ) վարժանքների և պրակտիկայի միջոցով նպաստել հոգեբանություն մասնագիտացմամբ ուսանողների մասնագիտական կրթության որակի բարելավմանը,

գ) իրականացնել գիտահետազոտական աշխատանքներ կիրառական հոգեբանության տարբեր ոլորտներում:

2.2. Դիտարանի խնդիրներն են.

ա) ԳԿՄԿ և այլ բուհերի հոգեբանության բաժինների մագիստրատուրայի ուսանողների մասնագիտական պրակտիկայի կազմակերպումը,

բ) պրոֆեսորադասախոսական անձնակազմի և հոգեկան առողջության ոլորտի մասնագետների մասնագիտական կրթության և հմտությունների զարգացումը,

գ) պրոֆեսորադասախոսական անձնակազմի կողմից մագիստրատուրայի ուսանողների խորհրդատվական և հոգեախտորոշիչ աշխատանքների վերահսկումը (սուպերվիզիա),

ե) հոգեբանության բնագավառում հետազոտությունների կազմակերպումը, անցկացումը և արդյունքների վերլուծությունը,

զ) օտարերկրյա հոգեբանական գիտական և հասարակական կառույցների հետ փոխհարաբերությունների հաստատումը, ամրապնդումը և զարգացումը,

է) գիտաժողովների, սեմինարների, քննարկումների կազմակերպումը,

ը) գիտական նյութերի, ամսագրերի և ժողովածուների հրատարակումը,

թ) հոգեբանական խորհրդատվության բնագավառում հավատարմագրման համակարգի մշակումը:

3. ԴԻՏԱՐԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

3.1. Դիտարանի աշխատանքների համակարգումն իրականացնում է ԳԿՄԿ հոգեբանության ամբիոնի վարիչը:

3.2. Դիտարանի ընթացիկ գործունեությունը ղեկավարում է Դիտարանի համակարգողը, ում աշխատանքի ընդունում և աշխատանքից ազատում է ԳԿՄԿ տնօրենը:

3.3. Դիտարանի համակարգողը.

ա) հետևում է Դիտարանի մասնագիտական և ֆինանսական գործունեության կատարմանը,

բ) կազմակերպում և ղեկավարում է Դիտարանի ընթացիկ աշխատանքները,

գ) վերահսկում է Դիտարանի բաժինների(դրանց առկայության պարագայում) աշխատանքները,

դ) ԳԿՄԿ տնօրենին առաջարկություն է ներկայացնում Դիտարանի աշխատողներին օրենքով սահմանված կարգով խրախուսելու, կարգապահական տույժի ենթարկելու վերաբերյալ,

ե) իր բացակայության ժամանակ առաջարկություն է ներկայացնում համակարգողի ժամանակավոր պաշտոնակատար նշանակվելու վերաբերյալ,

զ) պատշաճ կարգով կազմակերպում է Դիտարանում տարվող գործավարությունը:

3.5. Կենտրոնի հաստիքացուցակը սահմանում է ԳԿՄԿ տնօրենը:

3.6. Դիտարանի կառուցվածքի մեջ են մտնում խորհրդատվական, գիտահետազոտական, մասնագիտական պրակտիկայի :

3.7. Հոգեբանական խորհրդատվության բաժինն իրականացնում է ԳԿՄԿ ուսանողների, աշխատողների, կազմակերպությունների և բնակչության հետ անհատական և խմբային խորհրդատվական աշխատանքներ:

3.8. Գիտահետազոտական բաժինն իրականացնում է հոգեբանական հետազոտական աշխատանքներ, կազմակերպում է գիտաժողովներ, սեմինարներ, քննարկումներ:

3.9. Մասնագիտական պրակտիկայի բաժինը կազմակերպում է ԳԿՄԿ հոգեբանության բաժնի ուսանողների և հոգեկան առողջության ոլորտի մասնագետների գործնական աշխատանքները, հոգեբանական պրակտիկայի անցկացումը՝ ուսուցողական վարժանքների, դասախոսությունների, սեմինարների, գործնական պարապմունքների միջոցով: